Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական արտաքին բազմաչափությունը ազգային անվտանգության համատեքստում

Նիկողոսյան Ս. Վ.
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, հայցորդ (Հայաստան, Երևան)
sevakvachiki@mail.ru

Վճռորոշ բառեր՝ ազգային անվտանգություն, արտաքին քաղաքականություն, փոխգործակցություն, փոխլրացում և ներգրավվածություն, Հարավկովկասյան տարածաշրջան, բազմակողմ և երկկողմ ձևաչափեր

Геополитическая внешняя многовекторность Республики Армения в контексте национальной безопасности

Никогосян С. В.
Институт философии, социологии и права Национальной Академии Наук РА (Армения, Ереван)
sevakvachiki@mail.ru

Резюме: Для адекватного продвижения с геополитическими современными процессами, соответствующего реагирования на их позитивные и негативные тенденции Армения приняла стратегию защиты национальных интересов посредством взаимодополняемости и активного участия; основываясь также на приоритетность национальной безопасности. Политика внешней безопасности предполагает активное участие в региональных и международных процессах, осуществление многостороннего и двустороннего многослойного активного сотрудничества.
Ключевые слова: национальная безопасность, внешняя политика, взаимодействие, взаимодополняемость и вовлеченность, Южнокавказский регион, многосторонние и двусторонние форматы

The Geopolitical External Multivectorness of the Republic of Armenia in the Context of National Security

Nikoghosyan S. V.
The Philosophy, Sociology and Law Institute of the National Academy of Sciences of RA (Armenia, Yerevan)
sevakvachiki@mail.ru

Abstarct: For adequate advancement with modern geopolitical processes, appropriate response to their positive and negative trends, Armenia adopted a strategy to protect national interests through complementarity and active participation; also based on the priority of national security. The foreign security policy involves active participation in regional and international processes, the implementation of multilateral and bilateral multilayer active cooperation.
Key words: national security, foreign policy, cooperation, complementarity and inclusiveness, the South Caucasus region, multilateral and bilateral formats

Աշխարհաքաղաքական իրավիճակի ճիշտ գնահատումը եղել և մնում է ազգային անվտանգության ապահովման գործընթացի գերակա խնդիրներից մեկը: Չունենալով աշխարհաքաղաքական բազմաչափությունների հստակ պատկերը՝ հնարավոր չէ ժամանակի պահանջներին համապատասխան վերակազմավորվել սպառնալիքներին ու վտանգներին համարժեք պատասխանելու համար: Ժամանակակից աշխարհում խնդիրը բարդանում է նաև գլոբալացմամբ պայմանավորված մարտահրավերների ի հայտ գալով, որոնք պետության ինստիտուտի անվտանգ կենսագործունեության ապահովման համար ստեղծում են բազմաթիվ ու բազմապիսի խոչընդոտներ:

Ժամանակակից աշխարհում ազգային անվտանգության խնդիրը ազգային քաղաքականության կերտման և զարգացման համար դառնում է հիմնարար: Բազմաթիվ երկրներ, ղեկավարելով իրենց քաղաքական համակար-

գը, առավել մեծ ուշադրություն են դարձնում այդ համակարգի անվտանգությանը՝ վերջինս դիտարկելով որպես անվտանգություն-կայունություն-զարգացում եռամիասնական կառուցակարգի հիմքային բաղկացուցիչ: Այս համատեքստում Հայաստանի մերձակա տարածքներում գնահատելի են անվտանգության համար ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային բազմաթիվ սպառնալիքներ: Ներտարածաշրջանային սպառնալիքներն առավելապես պայմանավորված են տարածաշրջանում առկա ազգամիջյան հակամարտություններով, զինված բախումներով: Արտատարածաշրջանային սպառնալիքները հիմնականում բխում են տարածաշրջանի նկատմամբ բոլոր հիմնական ուժային կենտրոններում առկա շահերի խաչաձևումից:

Զ. Բժեզինսկին Հարավկովկասյան տարածաշրջանը դիտարկում է Հարավարևելյան Եվրոպայի, Միջին Ասիայի, Հարավային Ասիայի մի մասի և Մերձավոր Արևելքի հետ մեկ ամբողջության մեջ, որին տալիս է «Եվրասիական Բալկաններ» անվանումը [**4**, էջ 149]: Այս տարածաշրջանը ոչ միայն գլոբալ «խաղացողների», այլ նաև տարածաշրջանային լիդերների շահերի բախման կիզակետ է, քանի որ «Եվրասիական Բալկանները» հանդիսանում են և՛ Եվրոպան ու Հեռավոր Արևելքը կապող կարևոր տարանցիկ ուղի, և՛ այստեղ կենտրոնացված են բազմաթիվ բնական ռեսուրսներ, այդ թվում՝ նավթի և գազի հսկայական պաշարներ:

Միաժամանակ, այս տարածաշրջանի պետություններից յուրաքանչյուրը ունի լուրջ ներքին խնդիրներ: Աշխարհաքաղաքական տարանջատման տեսանկյունից կարելի է արձանագրել, որ տարածաշրջանում կան երեք անկախ պետական միավորներ (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) և անկախության ձգտող, այս կամ այն քաղաքական սուբյեկտի կազմում գտնվող մի շարք էթնոքաղաքական միավորներ (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսիա և այլն) [**3**, стр. 317]: Սակայն, բոլորի սահմանները կամ հարևանների հավակնությունների օբյեկտ են, կամ էթնիկ բախումների տիրույթ: Անվտանգային և ռազմաքաղաքական առումներով ոչ այդքան էլ կայուն պայմաններով է պայմանավորում այն հանգամանքը, որ ներկայումս Հարավային Կովկասում պաշտոնական ընկալմամբ գործում են հինգ ազգային զինված ուժեր՝ Հայաստանինը, Վրաստանինը, Ադրբեջանինը, Արցախինը և Աբխազիայինը [**9**, էջեր 21-22]:

Հարավային Կովկասը ավանդաբար համարվում է Ռուսաստանի և Արևմուտքի աշխարհաքաղաքական շահերի բախման միջավայր: Հակամարտությունը պայմանավորված էր մի կողմից Ռուսաստանի՝ հարավային ծովեր դուրս գալու ցանկությամբ, իսկ մյուս կողմից Արևմուտքի՝ մասնավորապես Անգլիայի՝ ամեն կերպ դրան հակազդելու ցանկությամբ: Ցարական, իսկ հետագայում Խորհրդային Ռուսաստանը, հասկանալով տարածաշրջանի կարևորությունը, ընդհանուր առմամբ, կարողացավ տվյալ ժամանակաշրջանում իր օգտին լուծել աշխարհաքաղաքական խնդիրը: Վերջինս կարողացավ ամրապնդել Սև ծովի արևելյան ափերն ու Կասպից ծովը, բայց բարձրագույն նպատակը՝ Ատլանտյան և Հնդկական օվկիանոսներ ելք ունենալը, մնաց չլուծված: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո էլ այս հակամարտությունը չվերացավ. Հետխորհրդային բոլոր երկրներում տեղի ունեցած հակամարտությունները ըստ էության այս երկու գլոբալ աշխարհաքաղաքական ուժերի հակամարտության հետևանքներն էին [**5**, էջեր 803-804]:

ԱՄՆ-ն տարածաշրջանում ներկայանում է որպես իր ազդեցությունն անընդհատ ընդլայնող «խաղացող», որը շահագրգռված է ոչ միայն տարածաշրջանի ռեսուրսների և աշխարհագրական հնարավորությունների օգտագործմամբ, այլ նաև, Ռուսաստանի՝ տարածաշրջանում միակ գերիշխողի դերի նվազեցմամբ: Նման կերպ գործելով՝ ԱՄՆ-ն Հարավկովկասյան տարածաշրջանում հետապնդում է ոչ միայն աշխարհաքաղաքական ռազմավարական նպատակներ, այլ նաև իրականացնում է իր տնտեսական շահերը [**4**, էջ 168]:

ԵՄ-ն ցուցաբերում է հարավկովկասյան պետություններն իր կառույց ընդգրկելու հրստակ մտադրություն: Տարածաշրջանի պետություններն արդեն ընդգրկված են Եվրոպական խորհրդի մեջ, ինչն արդեն իսկ հանգեցրել է այդ պետությունների արտաքին և ներքին քաղաքականության զգալի փոփոխությունների, սակայն անվտանգության և հակամարտութ-

յունների կարգավորման հարցերում ԵՄ-ի ազդեցությունը դեռևս բավականին թույլ է:

Եվրամիության կողմից տարածաշրջանի պետությունները դիտարկվում են որպես «քաղաքական Եվրոպայի» մի մաս, որոնք, իրենք էլ շահագրգռված են սեփական եվրաինտեգրմանը: Հարավային Կովկասի ԵՄ ինտեգրման մեջ շահագրգռված են նաև գրեթե բոլոր եվրոպական առաջատար պետությունները, հատկապես՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան: Նրանց աշխարհաքաղաքական ռազմավարության առաջին փուլը այդ պետությունների՝ եվրոպական միասնական քաղաքական տարածություն ինստիտուցիոնալ ներգրավվածության ապահովումն է: Աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հնարավոր է նաև, որ հետագայում տարածաշրջանը կվերածվի այդ երեքի մրցակցային պայքարի բեմ: Ներկայումս առավել ակտիվություն է դրսևորում Մեծ Բրիտանիան, որը տարածաշրջանում ներկայացված է խոշոր գեոտնտեսական ծրագրերով՝ Հարավային Կովկասը դիտարկելով որպես իր ավանդական շահերի տիրույթ: Ֆրանսիան որոշակի ազդեցություն ունի միայն Հայաստանում: Գնալով աճում է Գերմանիայի ազդեցությունը տարածաշրջանում: Գերմանիան աստիճանաբար և հետևողականորեն լայնացնում է իր ազդեցությունը դեպի եվրոպական և եվրասիական տարածքներ՝ օգտագործելով իր հրսկայական տնտեսական հնարավորությունները: Բայց միևնույն ժամանակ Գերմանիայի համար բարդ է ստեղծել ազդեցության իր ոլորտները այն տարածքներում, որոնք գրտնվում են Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի շահերի տիրույթում [**7**]: Դրանով իսկ կարելի է ընդգծել, որ ԵՄ պետությունները բազմաթիվ հարցերում չունեն միասնական մոտեցում, ինչն էլ հիմնականում խոչընդոտում է ԵՄ-ի շահերի առաջխաղացմանը:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության առաջնահերթ խնդիրներից էր արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը: Արտաքին քաղաքականության մեջ առաջնահերթությունների ընտրության գործընթացը ոչ միշտ էր հարթ ընթանում, քանի որ բազմաթիվ դեպքերում հենց արտաքին քաղաքականությունից էր կախված պետության անվտանգության ապահովման խնդիրը՝ գտնելով այդքան բարդ և ռազմականացված տարածաշրջանում: Սկզբնական շրջանում շեշտը դրվում էր առանց արտաքին օգնության սեփական անվտանգության համակարգի ձևավորման և տարածաշրջանում հարևան պետությունների հետ հարաբերություններում հավասարակշռության պահպանման վրա [**6**]:

Հայաստանի Հանրապետության կայուն ու շարունակական զարգացման միջոցով սոցիալական և իրավական պետության կառուցման, համընդհանուր ժողովրդավարական արժեքների պաշտպանության գործընթացում ի հայտ են գալիս երկրի զարգացմանը խոչընդոտող, ազգային անվտանգությանն սպառնացող բազմաթիվ մարտահրավերներ ու վտանգներ: Դրանք դրսևորվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական դաշտում, առնչվում պետության զարգացման բոլոր բնագավառներին և ունեն համաչափ ու անհամաչափ բնույթ:

Արտաքին համաչափ վտանգներն են՝ ժողովրդի ֆիզիկական գոյության, պետության անկախության և տարածքային ամբողջականության նկատմամբ հնարավոր ոտնձգությունները, Ղարաբաղյան հակամարտության հիմնախնդրի ռազմական լուծման նպատակով Ադրբեջանի կողմից մարտական գործողությունների վերսկսումը, Հայաստանի շրջափակումը, թշնամական պետությունների կողմից Հայաստանի քաղաքական, տնտեսական ու հաղորդակցային մեկուսացումը և այդ պատճառով նրա միջազգային դերի նվազումը՝ մարգինալացումը, երկրի արտաքին քաղաքականությանն առնչվող բարեկամական դաշինքների թուլացումը կամ քայքայումը, ինչպես նաև ոչ բարեկամական ռազմաքաղաքական դաշինքների ստեղծումն ու կայացումը, թշնամական պետությունների կողմից ապատեղեկատվությունը՝ ուղղված Հայաստանի կենսական ու ռազմավարական շահերի դեմ, և Հայաստանի շուրջ միջազգային բացասական կարծիքի ձևավորումը:

Արտաքին անհամաչափ վտանգներ կարելի է գնահատել՝ թշնամական ոչ կանոնավոր ռազմական ուժի գործունեությունը՝ ուղղված Հայաստանի դեմ, Հայոց Սփյուռքի դերի անկումը, միջազգային, այդ թվում՝ համակարգչային-տեղեկատվական, ահաբեկչությունը և

այլն:

Քանի որ Հարավային Կովկասը մեծ կարևորություն ունի աշխարհաքաղաքական գործընթացներում, պարզ է, որ տարածաշրջանը մնում է ուժային կենտրոնների շահերի մշտական բախման գոտի, որի հետևանքով տարածաշրջանը կարող է ներգրավվել անկանխատեսելի գործընթացների մեջ: Տարածաշրջանի կայունությունը մշտապես վտանգված է՝ հաշվի առնելով տարածաշրջանի խիստ էթնիկ և կրոնական բազմազանությունը, ինչպես նաև չկարգավորված տարածքային և միջէթնիկական խնդիրները: Տարածաշրջանի կայունությունը կարող է ապահովվել միջմշակութային և միջէթնիկ երկխոսության մշակույթի նախադրյալների ձևավորմամբ: Ունենալով հարուստ մշակույթ և գտնվելով տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում՝ Հայաստանը հնարավորություն ունի և պետք է ստանձնի միջմշակութային երկխոսության կազմակերպչի դերը:

Հայաստանի արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը նպատակաուղղված է դեպի միջազգային ինտեգրման: Ինտեգրման արդի գործընթացներով բնորոշվող աշխարհակարգում առանձին պետությունների ազգային անվտանգության ապահովումը հնարավոր չէ զուտ ներպետական ազգային նպատակների ու ներուժի իրացմամբ: Հայաստանի արտաքին անվտանգությունը շաղկապված է միջազգային ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումներին, որոնք անմիջականորեն ազդում են թե՛ միջազգային, թե՛ տարածաշրջանային անվտանգության միջավայրի ձևավորման վրա: Ուստի անվտանգության արտաքին համաչափ և անհամաչափ վտանգների չեզոքացումը հնարավոր է միայն միջազգային ինտեգրման միջոցով:

Ինտեգրման միջոցով արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը նպատակաուղղված է բազմաբնույթ խնդիրների լուծմանը, տարածաշրջանային ու միջազգային համաչափ և անհամաչափ վտանգների կանխարգելմանն ու չեզոքացմանը: Արտաքին անվտանգության ռազմավարության առաջնահերթությունները տարբեր են ըստ բնագավառների. ռազմական ոլորտ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում, տնտեսական ոլորտ՝ Հայաստանի տնտեսական մեկուսացման փորձերի չեզոքացում, քաղաքական ոլորտ՝ Հայաստանի և Հայոց Սփյուռքի դերի ու քաղաքական կշռի նվազեցման վտանգի կանխարգելում, ՀՀ միջազգային վարկի բարձրացում, տեղեկատվական ոլորտ՝ հակազդում Հայաստանի դեմ ուղղված ապատեղեկատվությանը և միջազգային հանրության պատշաճ իրազեկում:

Հայաստանն իր արտաքին անվտանգության ռազմավարությունն իրականացնում է՝ առաջնորդվելով փոխլրացման և ներգրավվածության հիմնարար սկզբունքներով:

Փոխլրացում: Հայաստանը միջազգային ասպարեզում հարաբերությունները կառուցում է գործընկերության հիմքի վրա՝ միաժամանակ արդյունավետ հարաբերություններ զարգացնելով տարածաշրջանում գործող շահագրգիռ բոլոր ուժերի հետ: Այն ողղված է տարածաշրջանում հավասարակշռության պահպանմանը: Ահաբեկչության դեմ պայքարում զանգվածային ոչնչացման զենքի չտարածման խնդիրներում միջազգային հանրության համախմբումը և միջազգային կայունության արդի մարտահրավերների շուրջ մեծ տերությունների միջև ծավալված երկխոսության դրական ընթացքը ներկայումս նպաստում են Հայաստանի կողմից փոխլրացման արտաքին քաղաքականության իրականացմանը:

Ներգրավվածություն: Հայաստանը տարածաշրջանային և համաշխարհային ներգրավման գործընթացներին մասնակցող երկիր է և իրեն դիտում է որպես տարածաշրջանում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացների լիիրավ մասնակից: Ներգրավվածությունը ենթադրում է մասնակցություն միջազգային ասպարեզում ընթացող այն զարգացումներին, որոնց համահունչ են Հայաստանի որդեգրած նպատակները: Ռուսաստանի հետ ռազմավարական հարաբերությունները, զարգացման եվրոպական ուղու որդեգրումը, ԱՄՆ և Իրանի հետ փոխշահավետ համագործակցությունը, ԱՊՀ-ին ու ՀԱՊԿ-ին անդամակցությունը, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության զարգացումը ընդլայնում են փոխլրացման քաղաքականություն վարելու ներուժը:

Բացի այդ, ՀՀ արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը իրակա-

նացվում է երեք հիմնական հարթություններով՝ միջազգային, տարածաշրջանային և համահայկական [**2**]: ՀՀ անվտանգությունը գլխավորապես պայմանավորված է հարևան երկրների հետ հարաբերություններով, ինչպես նաև այդ երկրներում և դրանց շուրջ ընթացող իրադարձություններով: Հայաստանը մշտապես հանդես է գալիս ինչպես տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, այնպես էլ միջազգային կազմակերպությունների, հարևան և արտատարածաշրջանային պետությունների միջև կառուցողական հարաբերությունների հաստատման օգտին:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության կարևոր յուրահատկություններից է Սփյուռքին առնչվող խնդիրների համալիրը: Հայկական Սփյուռքն իր թվաքանակով գերազանցում է Հայաստանի բնակչությանը, սփռված է ողջ աշխարհով և մեծ մասամբ ցեղասպանության ու բռնի տեղահանման արդյունք է: Սփյուռքը բնորոշվում է տարբեր պետություններում բարձր մակարդակի ներգրավվածությամբ, պետական և հասարակական կյանքում զգալի դերակատարությամբ: Հատկապես մեծ համայնքներ կան ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իրանում, Վրաստանում և մի շարք արաբական երկրներում: Սփյուռքահայության մեծ մասը այլ պետությունների քաղաքացի է: Սփյուռքի հետ կապերն առանձնահատուկ դեր ունեն Հայաստանի զարգացման համար, քանի որ Սփյուռքը յուրօրինակ կամուրջ է Հայաստանի և միջազգային հանրության միջև: Սփյուռքի տարբեր բնագավառների կազմակերպությունները զգալիորեն նպաստում են տվյալ երկրների հետ Հայաստանի երկկողմ կապերի զարգացմանը և Հայաստանի միջազգային ներգրավմանը:

Այդպիսով, ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է երկրի արտաքին անվտանգության ամրապնդմանը, պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումների ներկայացմանը, արտերկրում հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը, ինչպես նաև տարածաշրջանային խնդիրների կարգավորմանն ու համագործակցային մթնոլորտի ձևավորմանը [**1**]: Վերոնշյալի իրականացման նպատակով Հայաստանը ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով հարաբերություններ է հաստատել այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Աշխարհաքաղաքական արտաքին բազմաչափության համատեքստում ընդգծվում է այն անհրաժեշտությունը, որ Հայաստանը, լինելով փոքր պետություն և ունենալով սակավ հնարավորություններ, պետք է օգտվի փոքր պետությունների արտաքին քաղաքականության ամբողջ գործիքարանից, որի կարևոր բաղադրատարրերից են «փափուկ», «կոշտ» և «խելացի» ուժերը: «Փափուկ ուժի» հայեցակարգն առաջ է քաշվել և զարգացվել Ջ. Նայի [**12**] կողմից, ում կողմից այն ներկայացվում է որպես այլոց վարքագծի վրա ազդելու կարողություն՝ վերջնարդյունքում հասնելով իր նպատակների իրագործմանը: «Փափուկ ուժի» իմաստն է հասնել արդյունքի, որ ուրիշները ցանկանան այն, ինչ դու ես ուզում, ի հակադրություն «կոշտ ուժի», որն օգտագործում է սպառնալիքը: Համոզելը, իհարկե, միշտ ավելի արդյունավետ է, քան ստիպելն ու պարտադրելը: Փաստացի, կոշտ ուժը խաղում է «զրոյական գումարով», իսկ փափուկն ավելի ճկուն է և գործում է «հաղթող/հաղթող» սկզբունքով:

Ժամանակակից աշխարհակարգի բնույթը թուլացնում է կոշտ ուժի արդյունավետությունը: Ավելին, ժողովրդավարության զարգացումը նույնպես խանգարում է կոշտ ուժի արդյունավետությանը, արդյունքում՝ շատ երկրներ արտաքին հարաբերություններում վարում են փափուկ ուժի քաղաքականություն: [**19**]: Փափուկ ուժի կիրառումն առավել արդյունավետ կարող է դառնալ, եթե փոքր պետությունը ժողովրդավարական է և իշխանությունն ունի լեգիտիմության բարձր մակարդակ: Փափուկ ուժի իրականացմանը կարևոր եղանակներից է հանրային դիվանագիտությունը, որն իրականացվում է

ոչ քաղաքական հարթակում տարբեր դերակատարների՝ արտիստների, մշակութային գործիչների, հասարակական կազմակերպությունների, քաղաքական գործիչների անձնական կապերի, լրագրողների և հայտնի այլ մարդկանց կողմից, օտարերկրյա հանրույթների վրա ի շահ սեփական պետության ազդեցություն ունենալու նպատակով: Այս առումով ՀՀ-ն պետք է էլ ավելի ակտիվ համագործակցի հայկական սփյուռքի հետ, ինչպես նաև ունենա հնարավորություններ ազդելու այլ պետությունների հանրույթների վրա Հայաստանի և հայ ժողովրդի մասին դրական կարծիքի ձևավորման նպատակով՝ համաշխարհային ճանաչում ունեցող հայ անհատների ներգրավմամբ: Սակայն, նման մոտեցումն ակնհայտ կերպով չպետք է կրի պետական քաղաքականության բնույթ, այլ արդյունավետ կլինի իրականացնել որևէ հասարակական կազմակերպության միջոցով՝ ստվերում ունենալով պետության քողարկված աջակցությունը:

Որպես արտաքին քաղաքականության ռազմավարություն կարող է ծառայել երկու ուժերի արդյունավետ համադրումը, որը կոչվում է «խելացի ուժ», և առաջ է քաշվել Ս. Նոսսելի և Ջ. Ս. Նայի կողմից: Խելացի ուժը ձավորվում է փափուկ և կոշտ ուժի ռեսուրսներից [**12**]: ՀՀ-ի ռազմական ներուժի, տնտեսության և անվտանգային միջավայրի հաշվառմամբ պարզ է դառնում, որ Հայաստանը, լինելով փոքր պետություն, կոշտ ուժը որպես իր արտաքին քաղաքականության հիմնական ուղղություն կիրառելու ռեսուրս և հնարավորություն այդքան էլ չունի, ուստի մնում է առայժմ ապավինել փափուկ ուժի կիրառմանը, որպես վերջնական նպատակ ունենալով դառնալ պետություն, որը հնարավորություն կունենա կիրառել խելացի ուժ, այն է՝ փափուկ և կոշտ ուժերի համադրումը:

Իր անվտանգային միջավայրի որոշակի նմանությամբ ՀՀ-ի համար որպես օրինակ կարող է ծառայել Իսրայելը, որը հաջողությամբ կիրառում է խելացի ուժ և բարեհաջող կերպով իրականացանում է հանրային դիվանագիտություն: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ՀՀ-ն գործնականում խելացի ուժ կիրառում է Ադրբեջանի հանդեպ՝բանակցում է, բայց միևնույն ժամանակ իր զինված ուժերը անհրաժեշտության դեպքում կիրառում են կոշտ ուժ: Սակայն, նշված մարտավարությունը ՀՀ-ն կարող է կիրառել միայն իր հարևաններից երկուսի՝ Ադրբեջանի և Վրաստանի նկատմամբ, որոնք նույնպես համարվում են փոքր պետություններ:

Ազգային շահերը հաճախ վնասվում են կամ կարող են վնասվել այլ պետությունների կամ դրանց դաշինքների կոնկրետ գործողություններով: Օրինակ, բնավ էլ պարտադիր չէ, որ որևէ մի պետության տարածքային ամբողջականության դեմ ուղղված սպառնալիքը կապված լինի զինված ագրեսիայի և նրա տարածքի մի մասի գրավման հետ [**8**, էջ 77]: Անցած հարյուրամյակի դասական պատերազմները այս դարում կարող են գնահատվել որպես ժամանակավրեպություն: Ժամանակակից պայմաններում առկա են ոչ միայն երկրի տարածքային ամբողջականությունը խախտելու, այլև այն լիովին կազմալուծելու ամենաբազմազան միջոցներ ու եղանակներ, որոնք երբեմն լինում են բացահայտ, երբեմն էլ քողարկված (ոչ ուղղակի, թաքնված): Կարևոր է հիշել, որ դեպքերի բացարձակ մեծամասնությունում պետությունների կողմից իրականացվող գործողությունների իրական շահերն ու նպատակները քողարկվում են, թաքցվում լիովին բարեվայելուչ պատրվակներով:

Միջազգային ինտեգրման ռազմավարությունը արտաքին հարաբերությունների ոլորտում Հայաստանի անվտանգության ապահովման քաղաքականության հիմնական ուղենիշն է: Դա է ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակարգի կառուցման լավագույն միջոցը, քանի որ ընձեռում է բարեփոխումներ իրականացնելու, դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, միջազգային հանրության աջակցությունն ստանալու հնարավորություններ: Հայաստանի անվտանգության ապահովման մի շարք խնդիրներ գտնվում են միջազգային հարաբերությունների դաշտում. մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ ԵԱՀԿ շրջանակներում, բարեփոխումների, ժողովրդավարացման գործընթացը՝ ԵԽ-ի և ԵՄ-ի շրջանակներում, ռազմական անվտանգության ապահովման խնդիրները՝ ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի տիրույթում: Ուստի Հայաստանը միջազգային ինտեգրման ռազ-

մավարությունն իրականացնում է տարածաշրջանում իր շահերը ներառող համակարգերի հետ սերտ համագործակցությամբ, ներգրավվում է բազմաթիվ նախագծերում, ինչպիսիք են՝ «Եվրոպական հարևանությունը»՝ Եվրամիության հետ, «Հազարամյակի մարտահրավերները»՝ ԱՄՆ-ի հետ և այլն:

Հայաստանն անդամակցում է համընդհանուր սկզբունքներ, տեսակետներ ու արժեքներ դավանող, համապատասխան իրավապայմանագրային դաշտում գտնվող մի շարք միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին և օգտվում է դրանից բխող իրավունքներից ու պարտականություններից: ՀՀ-ն իրեն դիտում է ոչ թե միջազգային անվտանգության միայն սպառողի, այլև դրա ապահովման ակտիվ մասնակցի դերում: Հայաստանը մասնակցում է ահաբեկչության դեմ միջազգային պայքարին, զանգվածային ոչնչացման զենքի չտարածմանն ուղղված նախաձեռնություններին, խաղաղարար միջազգային առաքելություններին և նմանօրինակ այլ ձեռնարկումներին, վարում է ակտիվ ինտեգրման քաղաքականություն հետխորհրդային և եվրոպական տարածքում, միջազգային հարաբերություններում առաջատար դեր խաղացող առանձին պետությունների հետ:

Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող միջազգային համագործակցության շրջանակներում իր ուրույն տեղն է զբաղեցնում տարածաշրջանային և արտատարածաշրջանային մի շարք երկրների հետ իրականացվող արտաքին անվտանգային փոխգործակցությունը: Ավելին, եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունները Հայաստանի եվրոպական ներգրավման ընդհանուր գործընթացների առաջնային մասն են կազմում: Երկկողմ հարաբերությունների օրակարգում Հայաստանը, բացի անվտանգության և ռազմաքաղաքական առնչություններից, կարևորում է նաև երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման, եվրոպական ներգրավման, ղարաբաղյան հակամարտության կարգավորման և տարածաշրջանում կայունության հաստատման ու տարածաշրջանային համագործակցության զարգացման գործընթացները [**10**, էջեր 41-42]: Հայաստանը շահագրգռված է զարգացնելու բազմաբնույթ հարաբերությունները տարածաշրջանային և արտատարածաշրջանային երկրների հետ՝ առաջնային համարելով անվտանգության, քաղաքական, տնտեսական և մի շարք այլ ոլորտներում երկկողմ կապերի ամրապնդումն ու ընդլայնումը:

Հայաստանի արտաքին անտանգության քաղաքականության երկկողմ գործակցության ձևաչափով գնահատման հարցի հետ կապված մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ եթե տարածաշրջանային անվտանգության համատեքստում բնութագրելու լինենք ՀՀ անվտանգային արտաքին քաղաքականությունը, ապա այն կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝ տարածաշրջանային անվտանգության ապահովում, հաղորդակցության ուղիների ապաշրջափակում և շրջանցում, տարածաշրջանի համար արտաքին ուժային կենտրոնների ազդեցության նվազեցում և Հարավային Կովկասում անվտանգության յուրահատուկ համակարգի ստեղծում: Առկա խնդիրների լուծման ճիշտ ուղիների հնարավորինս միասնական մշակման և իրականացման դեպքում Հարավային Կովկասը կարող է վերածվել ամուր տնտեսական, քաղաքական և ռազմական անվտանգության համակարգ ունեցող տարածաշրջանի [**3**, էջ 336]:

Այսպիսով կարելի է ընդհանրացնել, որ աշխարհաքաղաքական արդի գործընթացների հետ համահունչ քայլելու, դրանց դրական և բացասական միտումներին համարժեք արձագանքելու նպատակով Հայաստանը որդեգրել է փոխլրացման սկզբունքով և ակտիվ ներգրավման միջոցով ազգային շահերը պաշտպանելու ռազմավարությունը՝ հիմնվելով նաև ազգային անվտանգության առաջնահերթության վրա: Բազմաչափության տեսակետից անվտանգային արտաքին քաղաքականությունը ենթադրում է ակտիվ մասնակցություն տարածաշրջանային ու միջազգային գործընթացներին, բազմակողմ և երկկողմ բազմաշերտ ակտիվ գործակցության իրականացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ արտաքին քաղաքականություն, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, հասանելի է՝ [http://www.mfa.am/hy /foreign-policy/]

2. ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, հասանելի է [http://www.arlis.am]
3. **Քոչարյան Տ.**, Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր.: ԵՊՀ հրատ., 2012, - 374 էջ
4. **Бжезинский З.**, Великая шахматная доска, М., 2002, - 216 с.
5. **Дугин А.**, Основы геополитики, М., 2000, 928 с.
6. **Манукян Ж.**, Политика Турции на Южном Кавказе и проблемы безопасности Республики Армения 1991-2007гг., Е., 2014, с. 91, հասանելի է [http://ysu.am/faculties/ hy/International-Relations/ section/staff/person/im2VInwOSjgAtwnJoT1Ad63PbM]
7. **Мурадян И.**, Интересы ЕС на Южном Кавказе и Карабахская проблема, 21-й ВЕК, № 3 (5), 2004, հասանելի է [http://www.noravank.am/upload/ pdf/217_ru.pdf]
8. Общая теория национальной безопасности / Под общ. ред. А. Прохожева, М., 2005, - 344 с.
9. **Саркисян М.**, О безопасности на Кавказе / Формирование атмосферы мира, стабильности и доверия на Южном Кавказе, Сборник статей, Центр по изучению конфликтов, июль, 2002, с. 20-29
10. **Ступишин В.**, Концепция комплементарности во внешней политике Армении // Ноев Ковчег, 2001, Март, с 38-46
11. **Hackbarth, James R.**, Soft Power and Smart Power in Africa / Strategic Insights, v. 8, issue 1, January 2009, pp. 1-19, հասանելի է [https://calhoun.nps.edu/bitstream/handle/10945/11196/hackbarthDec08.pdf?sequence=1]
12. **Joseph S. Nye, Jr.**, Combining Hard and Soft Power, Center for Strategic and International Studies, July/August 2009, հասանելի է [https://www.foreignaffairs.com/articles/2009-07-01/get-smart]

Сдана/Հանձնվել է 18.08.2019
Рецензирована/Գրախոսվել է 25.08.2019
Принята/Ընդունվել է 26.08.2019